Առաջարկվող առողջապահական ծառայության նախապայմանները՝

- Տվյալ համայնքում առաջարկվող ծառայության անհրաժեշտություն:
- Մեծ քաղաքներից (Երևան, Գյումրի, Վանաձոր, Ստեփանակերտ) դուրս տեղակայում:
- Ապացուցողական բժշկության հիմք:

Ծրագրին մասնակցության քայլերը՝

1. Եթե դիմորդի բիզնես գաղափարն իրատեսական է և համապատասխանում է ծրագրի պահանջներին, ապա նա հրավիրվում է մասնակցելու ՁԱՈ ծրագրի կրթական բաղադրիչին:
2. Դասընթացների ընթացքում մասնակիցները մասնագետների օգնությամբ կազմում են բիզնես-ծրագիր և որակի ապահովման ծրագիր, որոնք անցնում են հաստատման մի քանի փուլ:
3. Կրթական բաղադրիչը հաջողությամբ ավարտած մասնակիցները հնարավորություն են ստանում դառնալ ծրագրի շահառու և օգտվել ծրագրի բաղադրիչներից:

ԿԱՊ՝

+37455 050 164,
+37460 612 591
https://eih-trdp.aua.am/
eih.trdp@aua.am
fb.com/ eih.trdp
ՀԱՀ, Մ. Բաղրամյան պող. 40,
Ք. Երևան, ՀՀ 0019

ԹԳՀՁԾ մարզային գրասենյակներ՝

Գյումրու գրասենյակ
Գյումրու տեխնոպարկ, Գայի 1/303,
Ք. Գյումրի, 3105, ՀՀ
Հեռ.՝ +374 60 61 23 02

Իջևանի գրասենյակ
Վասիլյան 2/1, Ք. Իջևան, 4001, ՀՀ
Հեռ.՝ +374 60 61 23 01

Եղեգնաձորի գրասենյակ
Մոմիկի 5, Ք. Եղեգնաձոր, 3601, ՀՀ
Հեռ.՝ +374 60 612305

Ստեփանակերտի գրասենյակ
Գրիգոր Լուսավորչի 8/42,
Ք. Ստեփանակերտ, 375000
Արցախի Հանրապետություն,
Հեռ.՝ +374 479 7 40 58

Ջավախքի գրասենյակ
Ճավճավաձեի 21, Նինոծմինդա,
Սամթխե-Ջավախեթի, 3400
Վրաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +995 361 22 26 56

+37460 612 744
https://trdp.aua.am

AUA American University of Armenia

ԹՐՓԱՆՃԵԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Ծրագրի մասին

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) «Ձեռներեցներ առողջապահության ոլորտում» (ՁԱՈ) ծրագիրը սկիզբ է առել 2016թ.-ին և իրականացվում է ՀԱՀ Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետի կողմից՝ ՀԱՀ Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագրի (ԹԳՀԶԾ) հետ համագործակցությամբ:

ՁԱՈ ծրագիրը նպատակ ունի բարձրացնել որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիությունը Հայաստանի, Արցախի և Ջավախքի մարզային փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում:

ՁԱՈ ծրագիրն աջակցում է առողջապահության ոլորտի ձեռներեցներին հիմնել կամ ընդլայնել իրենց մասնավոր ծառայությունը՝ այդպիսով լրացնելով որակյալ առողջապահական ծառայությունների բացն ընտրված համայնքներում:

ՀԱՀ ՁԱՈ ծրագիրն առաջարկում է՝

- Ձեռներեցներին անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների տրամադրում՝ բուժօգնության որակի, բիզնեսի և հաշվապահության, ինչպես նաև կանխարգելիչ ատամնաբուժության ոլորտներում:
- Ֆինանսական աջակցություն ցածր տոկոսադրույքով (5%) վարկի տեսքով:
- Շարունակական մասնագիտական խորհրդատվություն մարքեթինգի, ֆինանսների, բանկային ծառայությունների, հաշվապահության, հարկային համակարգի, բուժօգնության որակի ապահովման և բարելավման, գործունեության մշտադիտարկման և գնահատման ոլորտներում:
- Սփյուռքի մասնագետների հետ համագործակցություն:
- Աջակցություն շարունակական մասնագիտական զարգացմանը:
- Ատամնաբույժ շահառուների կողմից սպասարկվող համայնքներում կանխարգելիչ ատամնաբուժության ուղղվածությամբ ծրագրերի իրականացում:
- Լրացուցիչ աջակցություն սահմանամերձ համայնքներին:

Ո՞վ կարող է դիմել

- Բժիշկները,
- կլինիկական օրդինատուրայի ուսանողները,
- առողջապահական ոլորտի այլ մասնագետներ,
- առողջապահական ծառայություններ տրամադրող կամ տրամադրել ցանկացող անհատները:

Ինչպե՞ս դիմել

- Այցելեք https://eih-trdp.aua.am վեբ-կայք
- Սեղմեք «դիմել հիմա» կոճակը
- Լրացրեք առցանց դիմում-հայտը՝ նկարագրելով Ձեր բիզնես գաղափարը*

*Դիմորդները կարող են նաև այցելել ՁԱՈ ծրագրի կամ կամ ԹԳՀԶԾ մարզային գրասենյակներ և լրացնել դիմում-հայտը աշխատակիցների օգնությամբ: